



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. երկրորդ եռամսյակում /վերլուծություն/

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 29664 գործարքներ, որոնց քանակը 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 21.4 %-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 17.6 %-ով:

2005թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10889 օտարման գործարքների 88.1%-ը կազմել են առուվաճառքները, 11.0%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 40.2%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. երկրորդ եռամսյակում, 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 10.0%-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 18.8%-ով: 2005թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3773 առուվաճառքի գործարքների 65.9 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13.2%-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 30.1%-ով:

2005թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երկրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երկրորդ եռամսյակ 2004թ.	երկրորդ եռամսյակ 2005թ.	առաջին եռամսյակ 2005թ.
Կենտրոն	156555.0-433881.0	247595.6	270949.8	259280.9
Արաբկիր	111825.0-290745.0	193813.6	228960.1	205099.0
Քանաքեռ-Զեյթուն	89460.0-223650.0	120407.7	139031.2	126148.7
Նոր-Նորք	89460.0-178920.0	101426.9	128205.7	113136.1
Ավան	80,514.0-156555.0	95822.7	119184.5	109111.4
Էրեբունի	71568.0-178920.0	96649.6	112832.4	100457.6
Շենգավիթ	71568.0-201285.0	110522.3	136362.1	122044.5
Դավթաշեն	89460.0-201285.0	121142.7	138733.0	129584.8
Աջափնյակ	89460.0-201285.0	108758.3	133529.0	119260.6
Մալաթիա-Սեբաստիա	89460.0-201285.0	109603.6	130039.8	116954.0
Նուբարաշեն	40257.0-80514.0	41967.2	63968.7	48677.8
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	<b>40257.0-433881.0</b>	<b>122519.1</b>	<b>145617.8</b>	<b>131795.9</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. երկրորդ եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 10.5%, իսկ տարեկան աճը՝ 18.9%:

2005թ. երկրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2005թ. երկրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1159 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 19.6%-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 2.1%-ով:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երկրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			երկրորդ եռամսյակ 2004թ.	երկրորդ եռամսյակ 2005թ.	առաջին եռամսյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	17804.0-66765.0	34837.9	43451.0	37208.3
	Ապարան	8902.0-26706.0	17474.1	19951.1	18866.6
	Թալին	8902.0-28931.5	16720.7	19339.7	15812.3
Արարատ	Արտաշատ	17804.0-42284.5	30758.8	33967.5	30972.4
	Մասիս	17804.0-44510.0	32412.5	38918.0	32165.5
	Վեդի	13353.0-28931.5	21406.2	20308.9	20600.6
	Արարատ	13353.0-31157.0	20083.3	25140.1	20950.5
Արմավիր	Վաղարշապատ	22255.0-80118.0	48049.2	68322.7	55915.8
	Արմավիր	17804.0-48961.0	28039.4	39156.6	35347.1
	Մեծամոր	8902.0-28931.5	17749.7	21039.6	16321.4
Գեղարքունիք	Սևան	8902.0-33382.5	18043.7	22098.3	18103.1
	Գավառ	8902.0-28931.5	18172.3	18057.4	16528.2
	Մարտունի	8902.0-31157.0	18025.3	21322.9	17530.4
	Վարդենիս	4451.0-20029.5	9573.1	10885.1	8526.6
	Ճամբարակ	5786.3-20029.5	9848.7	9066.0	8653.8
Լոռի	Վանաձոր	13353.0-42284.5	34286.7	34906.9	32690.5
	Ստեփանավան	8902.0-28931.5	19017.6	20830.8	17657.6
	Մայիսակ	13353.0-35608.0	18374.4	22664.9	22748.1
	Ալավերդի	6676.5-22255.0	14221.8	14836.6	12773.9
	Տաշիր	6676.5-26706.0	12531.4	18161.7	12169.5
	Թումանյան	4005.9-8902.0	5016.2	5010.1	5154.1
	Շամլուղ	2225.5-8234.4	2811.3	2728.7	2815.7
	Ախթալա	6676.5-15801.1	10363.2	10154.5	10546.9
Կոտայք	Աբովյան	20029.5-80118.0	48471.8	64744.0	57220.3
	Նոր Հաճն	22255.0-53412.0	32283.9	44345.6	39562.6
	Բյուրեղավան	13353.0-44510.0	20616.1	31387.9	24593.4
	Եղվարդ	15578.5-44510.0	24235.9	38455.8	28952.2
	Հրազդան	13353.0-44510.0	19568.8	26139.2	25197.9
	Ծաղկաձոր	17804.0-66765.0	42683.8	50817.1	45178.1
	Չարենցավան	13353.0-37833.5	19458.5	28331.1	21936.8
Շիրակ	Գյումրի	17804.0-53412.0	39817.4	37844.4	37781.0
	Արթիկ	8902.0-26706.0	15636.7	19951.1	15112.4
	Մարալիկ	8011.8-22255.0	14552.6	15716.3	13585.2
Սյունիք	Գորիս	11127.5-44510.0	18668.4	33251.8	20521.0
	Կապան	8902.0-35608.0	17988.6	26198.8	16671.4
	Սիսիան	8902.0-35608.0	17602.7	23559.6	18580.3
	Մեղրի	8011.8-35608.0	13964.6	19056.4	12519.4
	Ագարակ	8011.8-35608.0	13872.7	15552.3	12026.3
	Քաջարան	5786.3-17804.0	10455.1	12227.1	9496.9
	Դաստակերտ	4451.0-11127.5	6669.9	6307.4	6442.7
Վայոց Ձոր	Վայք	13353.0-35608.0	19458.5	22366.7	20998.3

	Եղեգնաձոր	17804.0-44510.0	25944.7	34325.4	28395.4
	Ջերմուկ	17804.0-53412.0	22655.7	37620.7	31354.2
Տավուշ	Դիլիջան	13353.0-35608.0	20487.5	28554.8	22668.6
	Իջևան	17804.0-44510.0	24070.5	32953.6	28490.8
	Բերդ	11127.5-31157.0	16334.9	23783.2	17848.5
	Նոյեմբերյան	6676.5-20029.5	15030.3	12421.0	13219.4

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 18.1%, տարեկան աճը՝ 25.3%:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1194 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 337, մյուս մարզերում միասին վերցրած՝ 857: 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 20.2%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 19.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ նվազել է 29.3%-ով: 2005թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.0%-ով, ընդ որում Երևանում՝ 29.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 6.5%-ով:

2005թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երկրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երկրորդ եռամսյակ 2004թ.	երկրորդ եռամսյակ 2005թ.	առաջին եռամսյակ 2005թ.
Կենտրոն	114061.5-894600.0	254963.8	297342.5	261301.2
Արաբկիր	89460.0-477300.0	199344.3	237146.3	206371.6
Քանաքեռ-Զեյթուն	67095.0-268380.0	121216.2	142088.0	127166.8
Նորք-Մարաշ	89460.0-447300.0	182972.7	168898.2	169290.6
Ավան	84987.0-357840.0	97568.3	122062.4	110018.2
Էրեբունի	67095.0-223650.0	98248.2	115203.2	101428.0
Շենգավիթ	67095.0-201285.0	111000.0	138718.1	123412.5
Դավթաշեն	89460.0-402570.0	122355.4	144250.1	130491.5
Աջափնյակ	55912.5-268380.0	110412.0	137271.7	120374.2
Մալաթիա-Սեբաստիա	62622.0-402570.0	110669.3	134229.8	117876.6
Նուբարաշեն	35784.0-89460.0	42371.5	66518.5	49695.9
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>35784.0-894600.0</b>	<b>131920.2</b>	<b>154884.4</b>	<b>137947.9</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, եռամսյակային աճը կազմել է 12.3%, տարեկանը 17.4%:

2005թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. երկրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			երկրորդ եռամսյակ 2004թ.	երկրորդ եռամսյակ 2005թ.	առաջին եռամսյակ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	26706.0-80118.0	46156.6	45971.0	41932.9
	Ապարան	11127.5-26706.0	21443.0	20830.8	19630.2
	Թալին	8902.0-28931.5	17308.7	20294.0	16798.6
Արարատ	Արտաշատ	22255.0-40059.0	34176.5	35011.3	31481.5
	Մասիս	22255.0-44510.0	34727.7	39827.6	32881.4
	Վեդի	13353.0-31157.0	22104.5	22650.0	23575.3
	Արարատ	13353.0-35608.0	21149.0	26228.6	22095.9
Արմավիր	Վաղարշապատ	35608.0-80118.0	49721.2	69291.9	56615.8
	Արմավիր	22255.0-44510.0	29619.6	39991.6	36078.8
Գեղարքունիք	Սևան	8902.028931.5	20064.9	23157.0	20187.0
	Գավառ	8902.0-26706.0	21994.2	19354.6	19073.4
	Մարտունի	11127.5-26706.0	19348.3	22575.4	19614.3
	Վարդենիս	6676.5-22255.0	11741.3	12391.1	10451.4
	Ճամբարակ	6676.5-22255.0	11079.8	10870.2	10690.0
Լոռի	Վանաձոր	22255.0-40059.0	38384.2	36204.2	34042.6
	Ստեփանավան	15578.5-35608.0	19495.3	26183.9	24116.2
	Սպիտակ	15578.5-31157.0	18870.6	23544.6	23957.1
	Ալավերդի	6676.5-22255.0	14479.1	15954.9	14317.0
	Տաշիր	6676.5-24480.5	12898.9	19250.2	13601.2
	Թումանյան	4451.0-13353.0	5457.2	6352.1	6013.1
	Շամլուղ	2225.5-8902.0	3472.8	4026.0	3913.3
	Ախթալա	8902.0-17804.0	11079.8	10959.7	11167.3
Կոտայք	Աբովյան	31157.0-80118.0	51264.7	65608.9	57967.9
	Նոր Հաճն	17804.0-53412.0	32412.5	45419.2	41058.0
	Բյուրեղավան	15578.5-40059.0	21332.7	32267.6	25229.7
	Եղվարդ	22255.0-44510.0	26238.7	39484.6	29588.5
	Հրազդան	15578.5-35608.0	22325.0	27719.8	27393.2
	Ծաղկաձոր	31157.0-66765.0	47644.9	53650.2	49011.9
	Չարենցավան	15578.5-40059.0	19899.5	29598.6	23464.0
Շիրակ	Գյումրի	26706.0-53412.0	50437.9	42317.7	44080.5
	Արթիկ	8902.0-31157.0	16077.6	20890.5	15987.3
	Մարայիկ	11127.5-22255.0	14846.6	16536.4	14173.8
Սյունիք	Գորիս	17804.0-40059.0	19274.8	34116.6	21125.5
	Կապան	13353.0-35608.0	18521.4	27153.1	17578.1
	Միսիան	8902.0-31157.0	18062.1	23559.6	19534.8
	Մեղրի	11127.5-26706.0	15544.8	19891.4	13696.6
	Ագարակ	6676.5-22255.0	15177.3	16417.1	13505.7

	Դաստակերտ	4451.0-15578.5	7276.3	7470.5	7778.9
Վայոց Ձոր	Վայք	8902.0-26706.0	20395.6	23276.2	22430.0
	Եղեգնաձոր	17804.0-44510.0	27194.2	35339.3	28984.0
	Ջերմուկ	11127.5-40059.0	23923.5	27689.9	21189.2
Տավուշ	Դիլիջան	13353.0-40059.0	21792.1	31999.2	27775.0
	Իջևան	17804.0-40059.0	24382.9	33684.2	29349.9
	Բերդ	8902.0-37833.5	17088.2	24528.8	18548.5
	Նոյեմբերյան	8902.0-26706.0	16978.0	13927.0	14842.0

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, եռամսյակային աճը կազմել է 15.5%, տարեկանը՝ 20.4%:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

Ընդհանուր առմամբ, 2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3984.57 հա /այդ թվում 127.38 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 3727.51 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 3865.22 հա հողերի /այդ թվում 121.56 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 3625.23 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 17 միավոր /4.91 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, ինչպես նաև 1 միավոր /0.06 հա/ հատուկ պահպանվող տարածքի հող:

Օտարված 112.83 հա /այդ թվում 2.13 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 100.43 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 6.93 հա /այդ թվում 3.69 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ, որից 1.85 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2492.41 հա, որից 2476.78 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. երկրորդ եռամսյակում մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի				բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	35	5.18	26	78.89	0	0.00	277	26.27	63	11.23
Արագածոտն	37	186.73	6	0.72	0	0.00	174	70.80	122	13.31	0	0.00
Արարատ	212	316.48	34	3.95	28	1.22	280	114.99	204	19.13	2	0.06
Արմավիր	226	1730.03	0	0.00	15	0.22	266	746.75	152	14.23	10	0.91
Գեղարքունիք	2	10.60	10	1.92	0	0.00	41	17.03	21	5.73	0	0.00

Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	73	39.97	17	1.54	3	0.02
Կոտայք	84	88.71	42	3.41	3	0.90	341	132.83	369	35.77	3	0.54
Շիրակ	17	7.87	26	1.55	8	0.76	45	44.38	22	4.28	3	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	40	43.64	5	0.53	0	0.00
Վայոց Ձոր	14	27.42	0	0.00	10	0.08	35	36.84	6	0.94	0	0.00
Տավուշ	0	0.00	8	0.57	0	0.00	24	10.16	11	1.18	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>592</b>	<b>2367.84</b>	<b>161</b>	<b>17.30</b>	<b>90</b>	<b>82.07</b>	<b>1319</b>	<b>1257.39</b>	<b>1206</b>	<b>122.91</b>	<b>84</b>	<b>12.77</b>

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են 3470 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ. երկրորդ եռամսյակում՝ 2621/, այդ թվում 1911-ը՝ գյուղատնտեսական նշանակության /1292/, 1541-ը՝ բնակավայրերի /1314/, 17-ը՝ արդյունաբերական օբյեկտների /12/, 1-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ /3 /:

2005թ. երկրորդ եռամսյակում հողերի առուվաճառքներից 814 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով, /2004թ. երկրորդ եռամսյակում՝ 554/, այդ թվում 34-ը՝ /37.70 հա/ Երևանում /38/, իսկ 780-ը՝ /2384.47 հա/ մյուս մարզերում /516/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 592 միավորը /2367.84 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2004թ. երկրորդ եռամսյակում՝ 149/, 147-ը՝ /15.15 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /375/, 68-ը՝ /37.01 հա/ հասարակական կառուցապատման /24/, և 7-ը՝ /2.16 հա/ արդյունաբերական օբյեկտների /3/ հողեր:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրված 1911 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 592-ը իրականացվել են աճուրդների, 33-ը՝ դատարանի վճռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	37	186.73	22.4	1239.1	237.1	147	36.98	357.9	4473.3	1773.7
Ապարան								89.5	760.5	281.8
Թալին						24	25.73	89.5	751.5	225.9
Ծաղկահովիտ						3	8.09	76.0	939.4	125.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	106	167.6	78.3	1599.2	366.8	122	51.46	331.0	5368.0	1055.7
Մասիս	54	48.09	40.3	5025.8	400.4	81	25.22	178.9	3936.5	1163.1
Վեդի	52	100.78	73.8	2554.3	742.6	64	35.14	201.3	3220.8	706.8
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	32	140.08	11.2	16466.3	711.3	99	248.96	290.8	2080.1	650.9
Բաղրամյան	121	1477.98	15.7	485.4	98.4	61	432.55	89.5	671.0	362.3
Վաղարշապատ	73	111.97	20.1	1098.2	286.3	103	63.99	438.4	6262.7	1093.7
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								187.9	492.1	290.8
Ճամբարակ	2	10.6	154.3	348.9	250.5	5	1.85	44.7	223.7	111.8

Մարտունի						29	5.42	44.7	1789.3	402.6
Սևան								44.7	447.3	172.2
Վարդենիս						7	9.76	26.8	527.9	140.9
Լոռու մարզ										
Այվերդի						11	3.78	161.0	2460.3	353.4
Գուգարք						15	5.55	223.7	2684.0	825.3
Սպիտակ						9	3.43	223.7	1476.2	460.8
Ստեփանավան						9	7.08	80.5	1789.3	239.3
Տաշիր						14	6.27	44.7	178.9	152.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	1.57	447.3	523.4	487.6	160	37.96	268.4	8946.7	2574.4
Եղվարդ	4	21	138.7	769.4	460.8	122	69.18	170.0	4473.3	1764.7
Հրազդան	78	66.14	129.7	1355.4	261.7	57	24.85	111.8	2684.0	559.2
Շիրակի մարզ										
Ախուրյան						18	16.14	246.0	1118.3	335.5
Ամասիա						3	4.69	35.8	234.9	89.5
Անի						10	9.97	107.4	357.9	172.2
Աշոցք						8	7.7	26.8	93.9	85.0
Արթիկ	17	7.87	154.3	420.5	331.0	6	5.87	62.6	357.9	129.7
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1.65	89.5	715.7	266.2
Կապան						7	4.42	53.7	894.7	194.6
Մեղրի						5	0.8	178.9	1896.7	400.4
Սիսիան						26	36.78	40.3	671.0	163.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	6	6.65	71.6	241.6	111.8	14	13.48	116.3	1789.3	1134.0
Վայք	8	20.77	123.0	487.6	219.2	21	23.35	53.7	1520.9	442.9
Տավուշի մարզ										
Բերդ						9	2.97	44.7	894.7	304.2
Իջևան						6	0.64	237.1	1789.3	720.2
Նոյեմբերյան						9	6.55	44.7	3730.8	351.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 1055 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 125-ը իրականացվել են աճուրդների, 1-ը՝ ուղղակի վաճառքի և 9-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	7200	35.8	143.1	125.3	115	124538	111.8	3578.7	1793.8
Ապարան						1	950	111.8	626.3	152.1
Թալին						6	7580	44.7	357.9	64.9



Ծաղկահովիտ								44.7	357.9	62.6
Արարատի մարզ										
Արտաշատ	17	19048	40.3	512.2	234.9	24	31930	134.2	2684.0	664.3
Մասիս	12	15380	252.7	261.7	255.0	153	130450	134.2	8946.7	787.3
Վեդի	5	5030	49.2	261.7	136.4	26	27630	111.8	984.1	467.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						35	49207	134.2	2236.7	713.5
Բաղրամյան						1	600	80.5	268.4	102.9
Վաղարշապատ						115	91965	134.2	4473.3	1062.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						5	4790.5	134.2	894.7	293.0
Ճամբարակ	9	18000	102.9	120.8	116.3			44.7	134.2	71.6
Մարտունի						12	13280	89.5	268.4	136.4
Սևան	1	1200	114.1	114.1	114.1	1	5690	89.5	894.7	116.3
Վարդենիս						3	33495	44.7	134.2	55.9
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1500	67.1	268.4	93.9
Գուգարք						10	6290	67.1	2326.1	413.8
Սյիտակ						3	3970	62.6	402.6	91.7
Ստեփանավան								44.7	268.4	71.6
Տաշիր						1	1130	44.7	134.2	60.4
Կոտայքի մարզ										
Աբովյան	18	14500	120.8	1409.1	1254.8	165	149688	134.2	4473.3	1281.6
Եղվարդ	2	2000	138.7	138.7	138.7	172	181550	134.2	4473.3	1404.6
Հրազդան	22	17589	4744.0	4775.3	4750.7	29	23242	134.2	3578.7	892.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	6	1285.3	456.3	1579.1	1080.3	14	31340.9	111.8	1520.9	239.3
Ամասիա								44.7	134.2	60.4
Անի						2	1460	67.1	178.9	82.8
Աշոցք						1	5050	40.3	134.2	53.7
Արթիկ	19	13920	69.3	894.7	257.2	4	4264	67.1	402.6	109.6
Սյունիքի մարզ										
Գորիս						5	5304	67.1	536.8	190.1
Կապան								67.1	626.3	183.4
Մեղրի								67.1	402.6	102.9
Միսիան								67.1	402.6	116.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	7021	67.1	984.1	190.1
Վայք								76.0	626.3	100.7
Տավուշի մարզ										
Բերդ								44.7	626.3	76.0
Իջևան	8	5650	219.2	261.7	223.7	11	11795	67.1	984.1	299.7
Նոյեմբերյան								44.7	626.3	93.9

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 23 գործարքներ 12.28 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ Արագածոտնի /3.08 հա/, 15-ը Արարատի /5.23 հա/, 1-ը՝ Արմավիրի /0.12 հա/, 1-ը՝ Սյունիքի /0.21 հա/, 4-ը Շիրակի /3.56 հա/ և 1-ը՝ Տավուշի /0.80 հա/ մարզերում:

2005թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3192 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 24.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 36.6%-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 24.1%-ով:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 138 բնակարանների, 65 անհատական բնակելի տների, 740 հասարակական, 76 արտադրական նշանակության օբյեկտների, 2167 միավոր հողերի, 6 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Այգետնակի վարձակալության գործարք չի գրանցվել:

2005թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 85 վարձակալության գործարքների քանակը 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 40.6 %-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 12.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 14959.70 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 59.21 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 14117.34 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 43.86 հա նախկին պահուստային/, 613.81 հա բնակավայրերի, 28.31 հա արդյունաբերական օբյեկտների, 13.30 հա էներգետիկայի օբյեկտների, 3.50 հա անտառային, 23.21 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 100.27 հա հատուկ պահպանվող տարածքների և 0.74 հա տրանսպորտի օբյեկտների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Կոտայքի մարզում՝ 6414.50 հա, որից 6402.84 հա գյուղատնտեսական նշանակության: 2005թ. երկրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 10479.63 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. երկրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր /	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	4	310.00	173	546.68
Արարատ	21	2753.03	54	641.30
Արմավիր	0	0.00	22	74.05
Գեղարքունիք	35	335.30	92	778.99
Լոռի	2	3.30	148	399.00
Կոտայք	62	5929.00	153	473.74
Շիրակ	7	649.00	234	446.44
Սյունիք	0	0.00	67	138.99
Վայոց Ձոր	0	0.00	60	81.68
Տավուշ	25	500.00	7	56.86
<b>Ընդամենը</b>	<b>156</b>	<b>10479.63</b>	<b>1010</b>	<b>3637.73</b>

2005թ. երկրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2005թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2487 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.4%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 26.2%-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 41.5%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 35.8 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /18.9%/, առանձնատների /16.0%/ և հողերի /15.1%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1230 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ, աճել է 17.4 %-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 49.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 1490.01 հա /այդ թվում 16.90 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 1467.93 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1196.34 հա, որից 1196.09 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2005թ. երկրորդ եռամսյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 43 և 26 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 51.4% -ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 5.5%-ով: 2005թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Սյունիքում՝ 18.8%:

2005թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5363 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 36.9 %-ով, իսկ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 30.6%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /50.2%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***